



N
6 նոյեմբերի 2018թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարի
ժամանակավոր պաշտոնակատար՝
պարոն Գեղամ Գևորգյանին

Մեծարգո պարոն Գևորգյան,

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն հայտնում է իր մտահոգությունը՝ կապված գլխիֆոսատի և քլորպիրիֆոսի ներկրման և Հայաստանի գյուղատնտեսությունում այդ թունաքիմիկատների օգտագործման աճող ծավալների հետ:

Ինչպես գիտեք, գլխիֆոսատը «Ռատոնդապ», «Ուրագան» և այլ առևտրային անվանումներով արտադրվող հերբիցիդների ազդող նյութն է: Եվրամիության երկրներում լայն քննարկումներ են ընթանում այդ թունաքիմիկատների արգելման անհրաժեշտության մասին: Որոշ երկրներում արդեն արգելված է դրանց օգտագործումը:

Հայաստանի գյուղատնտեսությունում գլխիֆոսատն ունի լայն կիրառություն: Ըստ գյուղատնտեսության նախարարության տվյալների, տարեկան ներմուծման ծավալներն անշեղորեն աճում են (2012թ.-ին՝ 12000 լ, 2013թ.-ին՝ 60000 լ, 2016թ.-ին՝ 149280 տ և 2017թ.-ին՝ 161800 տ):

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալությունը գլխիֆոսատը դասակարգել են որպես մարդու համար հավանական քաղցկեղածին: «Ուորլդ լայֆ էքսպեկտանսի» (World Life Expectancy) հետազոտական կենտրոնի 2016թ.-ին հավաքագրած տվյալների համաձայն, քաղցկեղից մահացության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրների ցանկում Հայաստանը զբաղեցնում է առաջին տեղը (Հայաստանում մահացության ցուցանիշը կազմում է 100 հազար բնակչի հաշվով 229.84 դեպք):

Վտանգավոր թունաքիմիկատների դերը քաղցկեղի առաջացման մեջ հաստատապես ապացուցված է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գլխիֆոսատով մշակելուց հետո այն չի քայքայվում և հանգեցնում է օդի, ջրի և հատկապես՝ ստորերկրյա ջրերի աղտոտվածության: Հանրապետության շատ շրջաններում գյուղատնտեսական հողերն արդեն իսկ լրջորեն աղտոտված են գլխիֆոսատով:

Հայաստանում բացակայում է շրջակա միջավայրում և մթերքներում գլխիֆոսատի պարունակության նկատմամբ վերահսկողությունը, ավելին, ոչ մի

ուսումնասիրություն չի իրականացվում թունաքիմիկատների, մասնավորապես՝ գլիֆոսատի օգտագործման և հիվանդացության դեպքերի միջև կապի բացահայտման ուղղությամբ:

2018թ.-ի օգոստոսին ընդունված դատական երկու պատմական որոշումները թունաքիմիկատների արդյունաբերությանը հասկացնել տվեցին, որ նրանց համար մարդկանց առողջության հաշվին շահույթ ստանալն այնքան էլ հեշտ չի լինելու:

1. Դատարանը ԱՄՆ Շրջակա միջավայրի պահպանման գործակալությանը հանձնարարեց արգելել «Դոու» (Dow) քիմիական ընկերության կողմից արտադրվող բարձր վտանգավորության թունաքիմիկատի օգտագործումը: Քլորպիրիֆոսը պետք է արգելվի 60 օրվա ընթացքում: Այս նեյրոտոքսիկ թունաքիմիկատը հատկապես վտանգավոր է երեխաների համար, քանի որ այն ազդում է երեխայի զարգացող ուղեղի վրա՝ հանգեցնելով զարգացման հետամնացության և աուտիզմի: Ընդունված որոշումը եղել է ոչ կառավարական կազմակերպությունների երկարամյա աշխատանքի արդյունքը, որոնք ձգտում են հասնել վտանգավոր քիմիական նյութերի օգտագործման արգելմանը (տե՛ս <http://www.panna.org/blog/court-epa-chlorpyrifos-ban>):

2. Երդվյալ ատենակալների կայացրած որոշման համաձայն, «Մոնսանտո»-ն Միացյալ Նահանգների քաղաքացի Դուեյն Ջոնսոնին պատճառված վնասի համար պետք է վճարի 289 մլն ԱՄՆ դոլար: Նա հիվանդացել է քաղցկեղով՝ հայտնի «Ռատուդապ» հերբիցիդի օգտագործման հետևանքով, որի ազդող նյութն աշխարհում լայնորեն օգտագործվող գլիֆոսատն է (առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս <https://www.facebook.com/NowThisNews/videos/2113239092099537>):

Քլորպիրիֆոսի լայն կիրառությունը անասնապահությունում և գյուղատնտեսությունում նույնպես լուրջ սպառնալիք է բնակչության առողջության, հատկապես՝ երեխաների մտավոր զարգացման համար:

Դիմում ենք Ձեզ խնդրանքով, որպեսզի Ձեր ղեկավարած նախարարությունը քննարկման դնի վերոհիշյալ թունաքիմիկատների հարցը՝ ստեղծելով միջգերատեսչական աշխատանքային խումբ, և որոշի այդ թունաքիմիկատների հետ կապված հետագա քաղաքականությունը և դրանք անվտանգ այլընտրանքներով փոխարինելու հնարավորությունը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

«Հայ կանայք հանուն առողջության և
առողջ շրջակա միջավայրի» ՀԿ նախագահ՝

Ելենա Մանվելյան